ԿԱՐԾԻՔ

Լուսինե Վասիլի Չիլինգարյանի «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ հոգեբանական գործոնները» ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քսանմեկերորդ դարասկզբին տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական, գիտամշակութային զարգացումները, երկրների միջև գոյություն ունեցող մրցակցային գործընթացները կառավարվում են կոնկրետ կառույցների, առաջնորդների գաղափարների հիման վրա: Դրանք իրենց նշանակալիությամբ և կիրառական ուղղվածությամբ պարտադիր կրում են հեղինակների հոգեկան կերտվածքի, նրանց սոցիալ-հոգեբանական դիմանկարի կնիքը: Հետևապես՝ ցանկացած ոլորտի կառավարման արդյունավետություն, դիտարկվում է որպես առաջնորդի, ղեկավարի կողմից կառավարման տվյալ ոլորտի առաջավոր մտքի տիրապետման կոմպետենցիա, ոլորտի զարգացման միտումների կանխատեսման առանձնահատուկ կարողություն և այլն:

Ռազմական գործունեության բնագավառը իր կառուցվածքով և գործառնական բովանդակությամբ հանդիսանում է փակ համակարգ, որին բնորոշ է ենթակառուցվածքների միջև կանոնակարգով ամրակայված փոխհարաբերությունների դրվածք: Մյուս կողմից՝ ի տարբերություն քաղաքացիական կառույցների, ռազմական ոլորտի միավորներում կառավարման պահանջները պարտադիր ուղղորդվում են «Բանակային կանոնակարգ»-ի դրույթներով: Չնայած այս և բազմաթիվ այլ առանձնահատկությունների, այնուամենայնիվ ռազմական ոլորտի հաջողությունները, պայմանավորված են համակարգում գործող անձանց մասնագիտական պիտանիության բարձր մակարդակով, միջանձնային հարաբերություններում համագործակցության մեծ հնարավորություններով, անձնակազմի պրոֆեսիոնալիզմով, անձնային բազմակողմանի բարձր պատրաստվածությամբ և այլն: Առանձնահատուկ պահանջներ են առաջադրվում ղեկավարների, առաջնորդների արդյունավետ կառավարման ոճերի, բարոյական որակների, սոցիալ-հոգեբանական հատկանիշների, ինչպես նաև բազմակողմանի ֆիզիկական, մարտական պատրաստվածության մակարդակների նկատմամբ:

Վերը նշված և բազմաթիվ այլ կարևոր հանգամանքներից ելնելով պետք է նշեմ, որ Լուսինե Վասիլի Չիլինգարյանի ատենախոսական աշխատանքի թեման մեր

ժամանակներում խիստ արդիական է, ունի կարևոր գիտագործնական նշանակություն, առավել ևս՝ ՀՀ նորաստեղծ բանակի կայացման հարցերում:

Լ. Չիլինգարյանի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական խնդիրների վերլուծման երկու գլուխներից և «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնները» փորձարարական հետազոտության երրորդ գլխից: Օգտագործված է հիմնախնդրին վերաբերվող հայերեն, անգլերեն, ռուսերեն 145 գրական աղբյուր, տեղ են գտել նաև աշխատանքի բովանդակությունն ամբողջականացնող 7 հավելված: Ատենախոսական աշխատանքի տեսական և էքսպերիմենտալ հետազոտություններին վերաբերվող հիմնարար արդյունքները արտացոլված են 32 աղյուսակների, 12 գծապատկերների, սխեմատիկ նկարների տեսքով, որոնցում արտացոլված են հետազոտական աշխատանքների իրականացման ու ստացված արդյունքների վիճակագրական հաշվարկների ընթացքը:

Աշխատանքի ներածության մեջ ներկայացվում են թեմայի կարևորությունն ու արդիականությունը, հետազոտությունների իրականացման տեսական գաղափարների ներգրավման հիմնավորումները, որոնք կառուցված են տարբեր դպրոցների գիտնականների աշխատությունների վերլուծությունների հիման վրա (Ս Սեդրակյան, Վ Եդիգարյան, Ա Նալչաջյան, Ա Լոքյան, Մ Բոգան,Դ Լինդս, Դ Վոյշեչիչ,Լ Վոնգ, Պ Բլիզ, Դ Մակ Գուրգ, Մ Մետյուս, Բ Ջոնսեն, Պ Սուիննի, Պ Լեստեր,Ռ Հոգան,Հ Մինցբերգ, Բ Լոմով, Ֆ Գենով, Ա Ժուրավլյով և այլն): Ներածության բաժնում ներկայացվում են նաև աշխատանքի նպատակն ու խնդիրները, վարկածը, հետազոտության համակազմն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը և այլն:

Լ. Չիլինգարյանի ատենախոսական աշխատանքի առաջին գլխում ներկայացված են կառավարման տարբեր համակարգերում առաջնորդման հիմնախնդիրներին վերաբերվող ժամանակակից գրականության աղբյուրներում արծարծվող գաղափարների վերլուծությունները: Համեմատական վերլուծությունների շնորհիվ բացահայտվել են տարբեր ոլորտներին բնորոշ առաջնորդների սոցիալ- հոգեբանական, անձնային որակների, պրոֆեսիոնալ առանձնահատկությունների հենքային բաղադրամասերը, գործունեության ընթացքում զարգացման և դրանց ձևափոխությունների մեխանիզմները: Ուսումնասիրություններում կարևոր տեղ են հատկացվում առաջնորդների անձնային

առանձնահատկությունների, բնագավառին բնորոշ սոցիալական հմտությունների արտահայտվածության բնութագրերին: Վերլուծություններում վեր են հանվում առաջնորդի կառավարման արդյունավետությունը ապահովող մի շարք գիտելիքների, հմտությունների համակարգեր, որոնք որպես «լռակյաց գիտելիքներ», կամ ռեզերվային հնարավորություններ, հիմք են հանդիսանում նրանց ղեկավարման սոցիալ-հոգեբանական պահանջների պատշաճ իրականացման համար: Անդրադարձ է կատարվում նաև ռազմական առաջնորդության պրոֆեսիոնալ գործունեության պահանջներին, անձի ինքնակառավարման և ինքնակարգավորման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրներին, այդ թվում նաև արդյունավետ կառավարման գործում ռազմական առաջնորդության անձնային նախադրյալների առկայության խնդիրներին: Հեղինակի կողմից դրանց համակարգումը և կարևորումը հիմնավորվում է զինվորական գործունեության ընթացքում մասնագիտական աճի, մարտական գործողությունների կառավարման պահանջներով, ստորաբաժանումներում և դրանց միջև կայուն համագործակցության ապահովման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «Առաջնորդությունը ռազմական համակարգում» գլուխը իր մեջ ներառում է ռազմական առաջնորդության հիմնախնդրի սոցիալ հոգեբանական վերլուծությունները, հիմնախնդրի կառուցվածքը, գործառնական բնութագրերը, առաջնորդների դերերի ու զինծառայողների կողմից հրամանների իրականացման կանոնակարգային պահանջները: Լուսաբանվում են ռազմական առաջնորդության հոգեբանական առանձնահատկությունները, զինվորական միջավայրում առաջնորդ-ենթակա փոխհարաբերությունները: Արծարծվում են նաև ՀՀ ռազմական ուժերում գոյություն ունեցող հրամանատարական առաջնորդության անհրաժեշտ ռազմամշակութային պահանջները: Պատմական ակնարկ է արվում հայ զինվորի բնութագրականներին, որոնք որպես առանձնահատուկ հատկանիշներ առանձնացվել են օտարազգի պատմիչների, ռազմական գործիչների ու առաջնորդների կողմից: Որպես կառավարման ինտուիտիվ հոգեբանական առանձնահատկություն վերլուծության են ենթարկվում առաջնորդության անձնային ճկունության, ինչպես նաև «լռակյաց գիտելիքների» բաղադրիչի կարևորությունը: Այնուհետև որպես ենթագիտակցական, ինտուիտիվ դերային մոդելների ընտրության վարքագիծ, անդրադարձ է արվում տարբեր գործոնների ազդեցության պայմաններում դրանց նշանակալիության սոցիալ-մշակութային, սոցիալ-հոգեբանական մեկնաբանումներին:

Վերլուծություններում կարևոր տեղ է հատկացվում հիբրիդային պատերազմներում կիրառվող ժամանակակից մեթոդներին, արհեստական բանականությանն ու մարդ-մեքենա հարաբերություններին, որոնք կառավարման առումով հեռանկարում ունեն բազմավեկտոր կիրառման անսպառ հնարավորություններ: Այնուհետև հեղինակի մեկնաբանություններում ներկայացվում են չմշակված, չկանոնակարգված ու չափավորված տեղեկատվության ազդեցությունների սոցիալ-հոգեբանական հետևանքները, սերունդների գիտակցության ձևափոխությունների սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, արժեհամակարգի, մոտիվների, դեստրուկտիվ վարքի ձևավորման վտանգավոր միտումները, որոնք առայժմ լիարժեք ուսումնասիրված չեն:

Ատենախոսական աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարում ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնների փորձարարական հետազոտություններին: Այստեղ ներկայացվում են հետազոտության մեթոդների նկարագրերը, կիրառման պահանջները, հարցաշարերի կառուցման սկզբունքները: Փորձ է արվում հիմնավորել նաև հայ սպայի առաջնորդության ոճի մոդելի ձևավորման նորովի ուսումնասիրության անհրաժեշտությունը, լիդերության հատկանիշների գնահատման գործիքների ստեղծման կարևորությունը: Ներկայացվում են նաև հետազոտության մեթոդների կիրառման մեթոդաբանությունը, իրականացված հետազոտությունների արդյունքները, որոնք տեղ են գտել աղյուսակներում, գծանկարներում և դիագրամներում: Ըստ նախատեսված հերթականության, սկզբում ներկայացվում են ռազմական ոլորտի առաջնորդների, այնուհետև քաղաքացիական ոլորտի առաջնորդների անձի տիպաբանական առանձնահատկությունները (էքստրավերտության, ինտրովերտության և նեյրոտիզմի), որպես խմբերում, անձի ինտուիտիվ դերային մոդելների ընտրության վարքագծի արտահայտվածություն: Այնուհետև ներկայացվում են դրանց արդյունքների համեմատական վերլուծությունները, խառնվածքի առանձնահատկությունների խմբային և անհատական բնութագրերը: Հեղինակային հարցաթերթիկների կիրառման արդյունքում բացահայտվել են ռազմական և քաղաքացիական համակազմերի առաջնորդության բարոյահոգեբանական գործոնները, միջխմբային տարբերակիչ և ընդհանրական հատկանիշները: Հետազոտության արդյունքների հիման վրա ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ընտրանքի արդյունքների հիման վրա կառուցվել են ղեկավար առաջնորդի իմիջի, նրա առաջնորդության իրական և ցանկալի մոդելները: Հետազոտության արդյունքների հիման վրա կառուցվել են նաև հայ սպայի, որպես

ռազմական առաջնորդի մոդելը: Ամփոփելով տեսական և կիրառական խնդիրների լուծման հետազոտական աշխատանքները, հեղինակը արել է համապատասխան հետևություններ և եզրակացություններ:

Ատենախոսական աշխատանքում նկատվում են բազմաթիվ թերություններ, որոնց վերաբերյալ կցանկանայի լսել ատենախոսի մեկնաբանությունները:

1. Թեմայի վերնագրից բխում է այն պահանջը, որ պետք է հետազոտվի կառավարման գործընթացը և դրա արդյունավետությունը, այդ թվում նաև այն գործոնները որոնք պետք է հիմք հանդիսան գնահատելու նրանց ազդեցության արդյունավետությունը:

Հարց է առաջանում ռազմական որ ոլորտն է ուսումնասիրվում (կապի, հետևակային,զրահատանկային,ավիացիոն և այսպես շարունակ), երբ հայտնի չէ ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ընտրանքների գործունեության բնույթը: Կառավարման ինչ գործառույթներ եք ուսումնասիրում, և արդյոք բոլոր սպաներն են որ ղեկավար են, և բոլոր ղեկավարները առաջնորդներ են:

2. Ինչով և ինչպես եք չափում ռազմական ոլորտի արդյունավետ կառավարումը, երբ տարբերակված չեն զորատեսակներն ու գործառույթները, դրանց յուրահատկությունները, առկա չեն դրանց պահանջները գործառույթների համակարգը, կանոնակարգով (устав) հաստատված ու սահմանված նորմատիվները, առավելագույն և նվազագույն սահմանները:
3. Ռազմական ոլորտը հանդիսանում է դժվար, հատուկ, արտակարգ, ճգնաժամային, սպատնալիքներով, վտանգներով հագեցած բնագավառ: Ինչ սկզբունքով եք ձևավորել ընտրակազմերը, և արդյոք բոլոր պաշտոնյաները, ղեկավարները կարող են համարվել առաջնորդներ, երբ հայտնի չեն ոչ քաղաքացիական և ոչ էլ ռազմական ոլորտում նրանց մասնագիտական տարբերակումները:
4. Կարծում ենք հետազոտության մարտկոցը չի կարող լիարժեք կերպով լուծել առաջադրված խնդիրների համակարգը, քանզի ոչնչով չի ապահովվում Ձեր կողմից առաջադրված հեղինակային հարցաթերթիկների գիտական հիմնավորվածությունը: Գոյություն ունեցող մոդելների համակարգում ինչ առավելություններով է օժտված ձեր կողմից առաջարկվող մոդելը, ինչով է չափվում այն: Այլապես, այն պնդումները, որ դուք ներկայացնում եք գիտական առումով համոզիչ չեն: Աղյուսակներում ներկայացված ցուցանիշները լավագույն դեպքում հանդիսանում են որպես առաջնային տվյալներ:

Աղյուսակներում դրանց տեղադրումն ու երկարաշունչ մեկնաբանումները կարծում ենք, որ լավագույն դեպքում պետք է տեղ գտնեին հավելվածներում:

5. Ձեր կողմից առաջադրված հետազոտության մեթոդների նկարագրությունը ատենախոսական աշխատանքի բովանդակության մեջ նպատակահարմար չէ, դա նույնպես ավելորդ ծանրաբեռնում է աշխատանքի բովանդակությունը: Ավելորդ ծանրաբեռնում է նաև մաթեմատիկական վիճակագրական հաշվարկների քայլանցիկ հերթականության մանրամասնությունների ներկայացնելը: Ատենախոսական աշխատանքներում նմանատիպ ներկայացնելու ձևը որպես պահանջ չի նախատեսվում:
6. Ձեր ուսումնասիրություններում քննադատում եք մյուս բանակների առաջնորդներին վերաբերվող բնութագրականները, (ունեք արդյոք ռուսական, գերմանական, չինական, անգլիական, ուկրաինական, կարելի է անվերջ թվարկել) որն է այն առանձնահատուկ առավելությունը և կառավարման ինչ գործառույթներին եք առաջնահերթություն տալիս, որոնց հիման վրա առաջադրում հայկական դեռևս կայացող բանակի սպայի մոդելը: Չունենալով աշխարհագրական դիրքին, ռելիեֆին, ռազմաքաղաքական և այլ կարևոր խնդրահարույց հարցերին տրվող պատասխաններ, հայկական բանակի զինվորին բնորոշ հոգեբանական դիմանկարի մշակված բազային նախատիպեր:

Ինչի հիման վրա եք կառուցել և առաջադրում հայոց բանակի ղեկավարի, առաջնորդ սպայի նորագույն մոդելը, երբ չունենք վերջին տասնամյակների ընթացքում տարբեր փոփոխականների ազդեցություններ կրած սպաների հոգեբանական դիմանկարը:

7. Աշխատանքում առկա են բազմաթիվ տեխնիկական և բովանդակային խոտաններ:

Այսպես՝ սկսած 94-րդ էջից մինչև 165 էջերը ներկայացվում են երեք տասնյակից ավելի աղյուսակներ, գծագրեր ու գծանկարներ: Նյութերում գերիշխում են հարցաթերթիկներում արտացոլված հետազոտվողների ցանկալի և իրական հատկանիշների քանակական վիճակագրությունների անվերջ շարադրանքները, որոնցում բացակայում են դրանց սոցիալ-հոգեբանական բնութագրերի վերլուծությունները: Դրա փոխարեն անվերջ հապավումների, սիմվոլների, թվային արժեքների պտտահողմ է մատուցվում հեռու լինելով ղեկավարների կառավարման գործառույթները, արդյունավետությունը գնահատող որևէ գործընթացից: Այնինչ, կառավարման հոգեբանության, ինժեներական, մարզական, մանկավարժական, ռազմական և բազմաթիվ այլ բնագավառներում կառավարման արդյունավետությունը գնահատվում է անձնային կամ խմբային սոցիալ-հոգեբանական կոնկրետ չափանիշներով: Ձեր պարագայում դրանք չեն երևում:

8. 184 էջի վերևից 8-րդ տողում գրված է անմիտ վերնագիր: Նույն էջի ներքևից 11 տողի բովանդակությունը հետաքրքիր հարցերի տեղիք է տալիս: Եվ այսպես շարունակ: Ընդհանուր աշխատանքն ընթերցելիս նույնիսկ տպավորություն է ստացվում, որ նախապաշտպանությունից հետո ատենախոսական աշխատանքը չի սղագրվել:

Եզրակացություն

Լուսինե Վասիլի Չիլինգարյանի «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ հոգեբանական գործոնները» ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Լուսինե Չիլինգարյանը արժանի է իր կողմից հավակնած գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մկրտումյան

Մասնագետի (Մելս Մկրտումյանի) ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտքարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ. Թադևոսյան

14.09.2026թ.